

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	ՀԱՌԻՃ
ՄԱՐԶ	ՇԻՐԱԿ



Հատիճը պատմական Հայաստանի և Շիրակ աշխարհի ամենահնագույն բնակավայրերից մեկն է իր պատմաճարտարապետական արժեքներով: Նրա կենսագրությունն սկսվում է

վաղնջական ժամանակներից, որի քարեդեն վկաները քարանձավային բնակատեղիներն են՝ (Կորկոտ ձորի) ձախափնյա հատվածում: Կենսագրություն, որ գալիս է նաև

Հայասայի թագավորությունից և այն ժամանակներից, երբ 3-րդ հազարամյակի (մ.թ.ա.) սկիզբն էր ու խոր ձորափոսերով շրջափակված Արագածոտն դարավանդի կենտրոնում հիմնադրվում էր նախապատմական Հայաստանի վեհանիստ

ամրոցներից մեկը, որը պիտի դառնար հայրենապաշտպան քաջերի հուսալի հանգրվանը: Դարավանդն ի վեր ու վար հիմնվում են մեկ տասնյակից ավելի ամրոցներ, սլացիկ պարիսպներ, պաշտպանական

ջրագոտիներ, ջրանցքներ ու ստորգետնյա գաղտնուղիներ: Ղևոնդ Ալիշանը վկայում է որ ոչ մի բնակավայր իր հեթանոսական ու քրիստոնեական պատմությամբ այնպիսի հարուստ ու ակնառու տեղեկություններ չի հաղորդում ժամանակակիցներիս, ինչպիսին մեզ է պարզվում Հատիճը: Ու շնորհիվ իր ժայռեդեն ամրոցների և ամրակուռ տաճարների բնակավայրը դեռևս VII դարասկզբին, մատենագիր ու ճարտարապետ Անդոկ Քրիստոստուրի ձեռնարկմամբ, անվանակոչվում է Հատիճ, որը գրաբարյան իմաստով նշանակում է (կաղնու ծառ):

Հատիճում է գտնվում ամենահնագույն քարանձավային խաչապատկերը, որը հազարամյա տևականություն ունի:

Հեթանոսական շինությունները, տեղի են տալիս հայկական նոր ճարտարապետության վերջին համամասնություններով կառուցվող գեղաքանդակ տաճարներին:

V դարավերջին կառուցվում է բազիլիք եկեղեցին, որը Ձիթհանք ձորի վերնահարթակն ընգրկելով, ունեցել է նաև պաշտպանական նշանակություն:

VII դարասկզբին հիմնադրվում է Սուրբ-Գրիգոր եկեղեցին ,որն ավարտելուց անմիջապես հետո Թեոդորա Քոտենավորը Ձեռնամուխ է լինում աստվածաբանական դպրոցի և

օժանդակ կառույցների շինարարությունը: Դպրոց, որի հազարամյակը լրանում է 2000թ օգոստոսին: Վանքի գլխավոր տաճարը կառուցվում է 1201 թվականին Զաքարե և Իվանե երկայնաբազուկների կամ վրաց միաբան զորքերի

տարած հաղթանակի: Գյուղ ձգվող ձորափնյա ճանապարհի սկզբնահատվածում տեղակայվում է այն ժամանակվա առաջին քարակերտ ցուցանակը՝ (Վանք Հատիճայ), (Գյուղ Հատիճայ) վիմագրերով:

Թաթարմոնղոլական արշավների ժամանակ ասպատակվում է նաև հայոց հինավուրց ուստանը: Ղփչաղների ցեղին պատկանող մի զորախումբ նվաճում է Հատիճը, թալանում մեծամեծ հարստությունները և իր վայրամիտ ցեղի անունով կոչում գյուղը՝ Ղփչաղ: Այս պախարակելի անունը 1400 թվականից մինչև 1946 թվականը շարունակում է պահպանվել և Հայաստանի

գերագույն խորհրդի որոշմամբ վերանվանվում է Հատիճ:

Հատիճը եղել է գրչության ու մանրանկարչության կենտրոն՝ իմաստուն մատենագիրներով հանդերձ:

Դպրոց ու վանքի ջերմ հովանավորներից է եղել Մխիթար Գոշը: Պատահական չպետք է համարել, որ իր ժամանակին Իսահակյանների գերդաստանը Ավետիք Իսահակյանի կրթության համար նախընտրում է Հատիճի դպրոցը:

1850 թվականին Գյումրիում հիմնադրվում է Հառիճավանքի ընկերությունը, որը նպատակ է ունեցել հանգանակած միջոցներով վերանորոգել տաճարները, դպրոցները, հյուրասենյակներն ու բժշկարանը: Հառիճի հնագույն կրթօջախում էլ ստեղծվում է Գևորգյան ճեմարանի նախապատրաստական բաժանմունքը ի թիվս մեծահամբավ մտավորականների: Հառիճավանքի ընկերությանը անդամագրվում են

նաև Ա.Իսահակյանի ծնողները՝ Սահակ և Ալմաստ Իսահակյանները, որմնադիր և իմաստասեր Թաթուլ Անտիկյանը: Դպրոցում տպարան հիմնելու համար մեծ ջանքեր է գործադրել Ղ. Աղայանը:


Արդեն 1856 թվականին Հառիճի դպրոցում ընգրկվել և սովորում էին Շիրակի դաշտավայրի 63 բնակավայրերից եկած 286 աշակերտներ: Հառիճավանքի ընկերությունում ընդգրկված բարեգործները 1861 թվականին միջոցներ են տրամադրում գյուղը խմելու ջրով ապահովելու և ոռոգման նպատակով ջրատար առուներ հիմնելու համար:

Մեծանուն Հառիճեցին՝ Երվանդ Տեր-Մինասյանը տասնյակ աշխատություններ է նվիրել Հառիճավանքի ու գյուղի պատմությանը: Մեծ Կոմիտասը 1904 թվականին առաջին մեծ

երգչախումբն է ստեղծել Հառիճում: Հառիճը՝ Շիրակի մարզի ամենահինագույն բնակավայրը, պետք է ամենայն ուշադրության արժանի լինի:

Հառիճավանք (նախկինում նաև՝ **Ղպիչաղավանք**), միջնադարյան եկեղեցական համալիր Հայաստանում: Այն հնագույն միջնադարյան հայկական վանքերից է: Ամենահին շինությունը 7-րդ դարում կառուցված Ս. Գրիգոր եկեղեցին է: Նրան կից կան 13-րդ դարում կառուցված երկհարկանի աղոթարաններ: Վանքի գլխավոր եկեղեցին կառուցվել է Չաքարե և Իվանե եղբայրների հրամանով 1201 թվականին, այն խաչաձև գրեթավոր մեծաչափ կառույց է:

Այս հուշարձանը միջնադարյան ճարտարապետության գոհարներից է՝ պարուրված նուրբ զարդաքանդակներով: Շինությունը վեհաշուք է իր պարզությամբ, կառուցման կատարելությամբ:



Հառիճավանքի հատակագիծը

Հնագույն շինությունը [VII դարում](#) կառուցված Ս. Գրիգոր մաստարայատիպ [եկեղեցին](#) է, որին հարավից կից են [XIII դարի](#) երկհարկ աղոթարաններ:

Վանքի գլխավոր եկեղեցին, որը կառուցվել է [1201](#) թ.-ին Չաքարե և Իվանե երկայնաբազուկների հրամանով, [խաչաձև-գմբեթավոր](#) մեծաչափ կառույց է՝ XII–XIII դարերի հայկական ճարտարապետությանը բնորոշ վերձիգ համամասնություններով: [Տաճարի](#) անկյունները զբաղեցնում են երկհարկանի նեղ [խորաններ](#): Հյուսիս–արևմուտքի և հարավ–արևմուտքի երկրորդ հարկի խորանները, դեպի ուր տանում են քարե բարձակային աստիճանները, աղոթասրահին են նայում սյունակամարակազմ բացվածքներով, որոնք ինտերիերին տալիս են պալատային տեսք:



Երկրորդ հարկ տանող աստիճանները

Հետաքրքիր է լուծված հատկապես արևելյան ճակատը, բարդ բեկվածքավոր գոտուց կազմված է մի խոշոր պատկեր՝ վերին մասում [խաչ](#)։ ղեպի ցած գոտին կրկնակվելով կազմում է ուղղանկյուն շրջանակ, որի մեջ տեղավորված է Չաքարե և Իվանե Երկայնաբազուկների կոնիտորական [բարձրաքանդակը](#)։ Այնուհետև, գոտիները, պսակելով «հայկական խորշերն» ու կողային խորանների նեղ լուսամուտները, անցնում են հարավային և հյուսիսային ճակատները, ուր վերին մասում դարձյալ կազմում են խաչ, իսկ ավելի ցածում՝ պսակում նեղ [լուսամուտները](#)։ Այս մեծ ելուստով, լայն գոտին դինամիկ, ցայտուն ու խստականոն կերպով մասնատում է ճակատների հարթությունը՝ ստեղծելով խորը լուսաստվեր և այլ քանդակագործների հետ նրանց հաղորդում պլաստիկություն։

Ամբողջ կառույցին իշխում է գմբեթի բարձրադիր, բազմանիստ թմբուկը, որը մասնատված է փունջ կազմող նուրբ [որմնասյուներով](#) և երիզված զիգագաձև քիվով։ Թմբուկի նիստերը զարդարված են մեկը մյուսին չկրկնող գոգավոր, սկուտեղանման [զարդաքանդակ](#)–վարդյակներով։ Կառույցի [նիստերից](#) աչքի է ընկնում նրբագեղ փորագրությամբ բեմեզերքը։

Եկեղեցուն արևմուտքից, որոշ չափով [ասիմետրիկ](#), տեղադրված է [XIII դարի](#) քառասյուն [գավիթ](#), որը եկեղեցուն մասշտաբով չհակադրելու համար կառուցված է համեմատաբար ավելի ցածր համամասնություններով։ Գավթի կենտրոնական մասը ծածկված է շթաքարե երդիկավոր վրանանման գմբեթով։ Մնացած մասերը ծածկված են հայելային թաղերով, որոնք շարված են աստղաձև և այլ տիպի քարերով։ Հարուստ է շքամուտքի հարդարանքը, նրա տիմպանը, խոր ներառնված սլաքային կամարի մեջ, շարված է աստղաձև քարերից և վիրտուոզ կատարված երկրաչափական ու բուսական ձևերի փորագրությամբ մանր վեցանկյունիներից։





Զրավազան





Հառիճավանքի մատուռը

Սելջուկների արշավանքի ժամանակ եկեղեցում բազմաթիվ մարդիկ են մտել և անհետ կորել: Սելջուկներն այդ հրաշքը բացատրում էին, որ մարդիկ հոգու զորությամբ եկեղեցում վերածվել են **աղավսիների** և թռչել գնացել: Սակայն եկեղեցում կար մի գաղտնարան, որով հայ փախստականները կարողացել են իջնել **ձորի** հատակ:

Եկեղեցի մտնելով սելջուկները մարդ չգտնելով կատաղել են և որոշել են եկեղեցին հողին հավասարեցնել: Նրանք **ձիերի** օգնությամբ քաշել պոկել են զանգակատանն իր վրա պահող 4 **սյուները**, սակայն եկեղեցին չի փլվել: Նման հրաշքից վախենալով սելջուկներն այլևս չեն փորձել քանդել կառույցը:

Ավանդություններից մեկի համաձայն էին իշխանական **օրհորոկներից** մեկը սելջուկներից փախչելով պատսպարվել է ժայռի վրա կառուցած մատուռում և երբ սելջուկները փորձել են տիրանալ օրհորոկին, ժայռը երկու մասին է բաժանվել և նման **հրաշքից** վախեցած սելջուկները մի կողմ են քաշվել և օրհորը փրկվել է:

Գյուղը վերաբնակվել է 200-250 տարի առաջ: Նախնիները գաղթել են Բասենից, Բաբերդից և Մուշից:

1887 թվականից Հառիճը գտնվել է Ալեքսանդրապոլի գավառի կազմում: 1921 թվականին բնակավայրում հաստատվել են խորհրդային կարգեր և մինչև 1996 թվականը ընդգրկված է եղել Արթիկի շրջանի կազմում: 1996 թվականին, Հայաստանի Հանրապետության վարչատարածքային վերջին բաժանումից հետո, Հառիճը, որպես վարչական առանձին միավոր՝ ինքնուրույն համայնք, ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի կազմում:

Բնակավայրի հիմնադրումից ի վեր բնակչության հիմնական զբաղմունքը եղել և մնում անասնապահությունը, հացահատիկային և կերային կուլտուրաների մշակությունը: Առանձին տնտեսություններ զբաղվում են մեղվապահությամբ:

1960-ական թվականներից հետո համայնքի աշխատունակ բնակչության որոշակի մասը աշխատել է Արթիկի գորգագործական արտադրամասում, Վակումային վառարանների արտադրական ձեռնարկությունում, Արթիկտուֆ քարի արտադրության ձեռնարկությունում, շինարարական, արտադրական և գյուղատնտեսական այլ կազմակերպություններում:

Սակայն գյուղատնտեսական և արդյունաբերական նշված ձեռնարկությունները ներկայումս չեն գործում և համայնքի աշխատունակ բնակչության հիմնական մասը զբաղված է գյուղացիական տնտեսությամբ, տուֆ քարի արտադրության և վերմշակման փոքր ձեռնարկություններում ու արտագնա աշխատանքով: Վերջին 20 տարիների ընթացքում արտագնա աշխատանքի բերումով համայնքից գաղթել են ավելի քան 20 ընտանիքներ:

Բնակավայրն իր զարգացումն հիմնականում ապրել է հետպատերազմյա ժամանակաշրջանում: Գյուղում կառուցվել է սկումբ, գրադարան, բուժ. կետ, խանութներ, բաղնիք, կենցաղի տուն, բնակելի տներ, անասնապահական և գյուղատնտեսական նշանակության տասնյակ օբյեկտներ: Կայուն տնտեսական աճ է ունեցել Հառիճի սկզբնական շրջում՝ կուլեկտիվ, ապա խորհրդային տնտեսությունը: Այն աչքի է ընկել հատկապես հացահատիկի և մսի արտադրության բարձր ցուցանիշներով:

Գյուղի վարելահողերի գերակշռող մասը լեռնատափաստանային սևահողեր են, որի ռոտզման, պարարտացման և ագրոտեխնիկական կանոնների ճիշտ կիրառման դեպքում կարող է ապահովվել հացահատիկի և բանջարաբուստանային մշակաբույսերի կայուն և բարձր բերքատվություն:

Համայնքը բոլոր ժամանակներում մեծ կարևորություն է տվել սերունդների կրթության և դաստիարակության հարցերին: Գյուղում գործում է 1400-ամյա դպրոցը: Իր գոյության տարբեր դարաշրջաններում պատմագրել է բազմաթիվ նշանավոր անուններ: Այստեղ սովորել, աշխատել ու գործել են այնպիսի դեմքեր, ինչպիսիք են Հովհաննես Օձնեցի կաթողիկոսը/7-րդ դար/, Վարդան Արևելցի, Սամուել ու Մխիթար Անեցի պատմիչները, Ավ. Իսահակյանը, Ղ. Աղայանը, Ս»Ղ »ճ՝ՆՅՄ Կոմիտասը, օճ»ՍՇՅՅ »ճ՝ՂՅՅճ՝»ՂԱ և շատ ուրիշներ: Հառիճի միջնակարգ դպրոցը բոլոր ժամանակներում ունեցել է բարի ավանդույթներ և ուսման բարձր առաջադիմություն: Յուրանքանչյուր տարի, դպրոցի շրջանավարտները տեղ են զբաղեցրել հանրապետության հեղինակավոր պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում: Սակայն բնակչության ներկայիս սոցիալական վատ պայմանների պատճառով քչերին է հաջողվում իրենց երեխաներին բարձրագույն կրթության տալ:

Համայնքը գիտության, մշակույթի և արվեստի ոլորտներում տվել է տասնյակ նշանավոր մարդիկ:

Համայնքի նշանավոր մարդկանցից են՝

- Սերգեյ Նազարեթյան – ակամադեմիկոս.
- Երվանդ Տեր- Մինասյան – հայագետ
- ²Éμ»ճ՝ ԾáİՆ³ÝÝՇëÛ³ÝÁ- ·ճáÕ, ³ճÓ³İ³·Շճ
- Պ³·Շİ ²ÝİáÝÛ³Ý / Պ³·Շİ Ծ³éՇ×»óՇ / - ·ճáÕ
- Ծճ³ă ,³İÃÛ³Ý - ·ճáÕ:

ՀաéՇ×Á ակտիվ մասնակցություն է ունեցել ինչպես Հայրենական Մեծ պատերազմին, այնպես էլ Արցախյան ազատամարտին:

Հայրենական Մեծ պատերազմում գյուղը տվել է 113 զոհ, որոնց հիշատակին է նվիրված գյուղի հարավային մասում 1981 թվականին կանգնեցված հուշարձան կոթողը:

Արցախյան ազատամարտի մասնակիցներ են համայնքի 25 ազատամարտիկներ, ½áÑ 2:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆՆԿԱՐԱԳԻՐ

Հառիճ գյուղը գտնվում է Արագածի արևմտյան լանջին, իր հողային տարածքով սահմանակից է հյուսիսարևելյան մասով Շիրակի մարզի Նահապետավան, հարավարևմուտքից Արթիկ քաղաքին և հողատարածքներին:

Գյուղը ունի կտրտված ռելիեֆ: Այն ծովի մակարդակից բարձր է մոտավորապես 2020 մ: Ամենաբարձր ջերմաստիճանը, որը նկատվում է հուլիսի վերջին տասնօրյակին և օգոստոսի առաջին տասնօրյակին՝ +30+35C: Ունի խստաշունչ ձմեռ՝ ամենացածր ջերմաստիճանը՝ հունվար ամսին կազմում է -30-35C: Ջերմաստիճանային տատանման ամպլիտուտը կազմում է +35 C -35 C: Կլիման խիստ ցամաքային է, որպես խմելու ջուր օգտագործում են <Թագավորական> լճակից, իսկ վերջին տարիներին Մանթաշի ջրամբարից: Հողերը ոռոգելի չեն, չնայած որ ոռոգելու հնարավորություններ առկա են: Հաշվարկված է, որ 1993 թվականից մինչև այսօր տարեկան մթնոլորտային տեղումների միջինը կազմում է 450մմ- 460 մմ: Արձանագրված է եղել. Որ ամենացածր տարեկան տեղումները եղել են 1965 թ-ին՝ 219 մմ և 1989 թվականին՝ 195մմ: Հարուստ է վարդագույն տուֆ քարով, ավազով ու կավով: Բնակավայրի տարածքը հարուստ է բնական ջրերով: Հողատարածքները մշտապես վտանգված են կարկտահարությամբ և տևական երաշտով: Տարածքը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում: Հիշարժան են 1926 և 1988թթ աղետային երկրաշարժերը:

3.ՀԱՄԱՅՆՔԻԿԼԻՄԱՅԱԿԱՆՀԱՄԱՌՈՏԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	599մմ
Օդիմիջ Google Chrome.Ink ինջերմաստիճանըհունվարին(°C)	-30
Օդի միջինջերմաստիճանը հուլիսին(°C)	+30

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից 1.1) 1.2) 1.3)	
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Արթիկ
3.Համայնքի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	100
3.2) մարզկենտրոնից (կմ)	30
3.3) պետական սահմանիցուղիի գծով (կմ)	20
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	5
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	1.5
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	5
4.Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	2020
5.Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	12.5կմ ² 1250
6. Սահմանակից համայնքների անվանումները	Սարալանջ, Նահապետավան, Արթիկ

7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	harich.shirak@mta.gov.am harich.gp@mail.ru
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	-
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	055-01-33-00
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	0244-5-84-44
11. Համայնքի հեռախոսային կոդը	0244
12. Համանքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	այո
13. Համայնքապետարանի փոստային դասիչը	3014
14. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	այո

5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	1930
2. Գրանցված ծնունդների քանակը	10
2. Մահացության դեպքերի քանակը	8
3. Ամուսնությունների քանակը	7
4. Ամուսնալուծությունների քանակը	2
5. Տնային տնտեսությունների թիվը	390
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	40
7. Կենսաթոշակառուների քանակը	159
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	40

6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2018թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	1
3. Երաժշտական դպրոցների քանակը	-
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	-
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	-
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	-
9. Մարզադպրոցների քանակը	-

7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ²)	39600

2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	-
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	261

8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	4116.54
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	327.26
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	149.55
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	291
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	97
7. Խոզերի գլխաքանակը	70
8. Գյուղատնտեսական տեխնիկա	3
8.1 տրակտորներ (քանակը)	3
8.2 կոմբայններ (քանակը)	-
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	390

9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	3
2. Համայնքում գազի ֆիկացման առկայությունը (այո, ոչ)	Այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	Այո
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	Այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	20 կմ
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	-
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	3
6.2 Էքսկավատորների քանակը	-
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	1
6.4 Գրեյդերների քանակը	-
6.5 քանակը	-
6.6 Աղբատար մեքենաների քանակը	-
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	-
6.8 Վակուումային փոշեկուլմեքենաների քանակը	-
6.9 Ավտոաշտարակների քանակը	-
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	2 կմ
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	Ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	Այո

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ*Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)*

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը եկամուտներ	33530.8	33530.8
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում`	3191.8	3191.8

2.1 հողիհարկ	1382.0	1382.0
2.2 գույքահարկ	1809.8	1809.8
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	30339.0	30339.0
3.1 դոտացիա	30339.0	30339.0
3.2 սուբվենցիա	0.0	0.0
4. Մուտքերի հոդի օտարումից	0.0	0.0

Համայնքի վարչական բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	37946.0	37801.0

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	427.4	1681.4

Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	427.4	1681.4

11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝	7
1.1 համայնքային ծառայողներ	5
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	15374.9
3. Ավագանու անդամների թվաքանակը	5

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
Համայնքի միջհամայնքային ճանապարհի ասֆալտապատում	Պետական միջոցներով
<Հառիճի նախադպրոցական ուսումնական հաստատություն> ՀՈԱԿ-ի վերանորոգում, կահավորում	Այլ կազմակերպության կողմից
<Հառիճի մշակույթի տուն > ՀՈԱԿ-ի վերանորոգում կահավորում	Պետական միջոցներով
Հառիճ համայնքի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում	Համայնքի միջոցներով
Ոռոգման ցանցի վերանորոգում	ԶՕՄ-ի միջոցներով
Համայնքի ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների փոսային նորոգում	Համայնքի միջոցներով